DOI: 10.59560/18291155-2025.3-71

ԱՐՏԱԿ ՂԱԶԱՐՅԱՆ
Իրավաբանական գիտությունների թեկնածու

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ՝ ԻՐԵՆՑ ՄԵՐՁԱՎՈՐՆԵՐԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐ ԱՅՑԵԼԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ԶՐԿՈՒՄԸ՝ ԻԲՐԵՎ ՄՏՔԻ, ԽՂՃԻ ԵՎ ԿՐՈՆԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԽԱԽՏՈՒՄ

Ամփոփագիր

Հոդվածը նվիրված է 2022 թ. շրջափակման և 2023 թ. սեպտեմբերյան ռազմական հարձակման հետևանքով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի շարունակական խախտմանը:

Խախտումը դիտարկվում է ԼՂ-ից բռնի տեղահանված բնակչության՝ ԼՂ-ում գտնվող իրենց հարազատների գերեզմաններ այցելելու և այնտեղ կրոնական-ծիսական կարգեր անցկացնելու հնարավորության բացակայության համատեքստում: Հոդվածում շեշտվում է կրոնի առանցքային դերը մարդու՝ որպես անձի (սուբյեկտի) ձևավորման, բարոյական ընկալումների և ինքնագիտակցության զարգացման գործում:

Քննարկվում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) 9-րդ հոդվածի վերաբերյալ ՄԻԵԴ ձևավորած իրավաբանությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով կրոնի ազատության ներքին (forum internum) և արտաքին (forum externum) դրսևորումներին: Ընդգծվում է, որ կրոնական ծեսերին և արարողություններին մասնակցությունը կրոնական հայացքների արտահայտման առանցքային միջոց է: Տարբերակվում են կրոնի արտահայտության առանցքային մաս հանդիսացող արարքները և կրոնից սոսկ ներշնչված

արարքները՝ հիմնվելով ՄԻԵԴ նախադեպային իրավական դիրքորոշումների վրա:

Շեշտադրվում է, որ ԼՂ հայ բնակչությունը, լինելով Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հետևորդ, բռնի տեղահանության պատճառով զրկվել է իր մերձավորների գերեզմաններ այցելելու և այնտեղ կրոնական-ծիսական կարգեր իրականացնելու հնարավորությունից, ՄԻԵԴ իրավաբանության լույսի ներքո հիմնավորվում է ՄԻԵԿ 9-րդ հոդվածով նախատեսված իրավունքի շարունակական խախտումը:

Հիմնաբառեր. Լեռնային Ղարաբաղ, բռնի տեղահանված անձինք, մտքի, խղճի և կրոնի ազատություն, ՄԻԵԿ 9-րդ հոդված, գերեզմաններ այցելելու իրավունք, կրոնական ծեսեր, կրոնի արտահայտման ազատություն, forum internum, forum externum, մարդու արժանապատվություն, հոգևոր իրավունքներ:

Ներածություն

2022 թվականի դեկտեմբերին սկսված՝ Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի շրջափակումը, իսկ 2023 թվականի սեպտեմբերի 19-ին իրականացված ռազմական հարձակումը և ագրեսիան հանգեցրին ԼՂ հայ բնակչության բռնի տեղահանմանը: Այս զարգացումները ուղեկցվեցին մարդու իրավունքների զանգվածային խախտումներով:

Այս համատեքստում, տեղահանված անձանց շրջանում մեր կողմից իրականացված հարցումների և խորքային հարցազրույցների արդյունքում արձանագրվել է, որ ԼՂ-ից բռնի տեղահանված անձինք նյութական կորուստների բացի, եթե ոչ առավել, ապա առնվազն ոչ պակաս զրկանքներ են կրում ԼՂ-ում գտնվող իրենց հարազատների գերեզմաններ այցելելու անհնարինության պատճառով:

Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի նկատմամբ 2023 թվականի սեպտեմբերի 19-ին իրականացված ռազմական հարձակման և ագրեսիայի բերումով ԼՂ-ից բռնի տեղահանված բնակչությունը, ի թիվս այլնի, նաև զրկվեց իրենց մերձավորների գերեզմաններ այցելելու հնարավորությունից, ինչը ոչ միայն ցավի և որոշ դեպքերում նաև՝ հոգեկան տառապանքի աղբյուր է ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց համար, այլև ինքնին նրանց հիմնական իրավունքի սահմանափակում է:

ԼՂ բնակչության մեծագույն մասը, լինելով Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հետևորդներ, բռնի տեղահանության բերումով զրկված է այնտեղ մնա-

ցած գերեզմաններում կրոնական-ծիսական արարողություններ հավուր պատշաճի իրականացման հնարավորություններից:

Սույն հոդվածի շրջանակներում կքննարկվեն ԼՂ-ում գտնվող գերեզմաններ ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց կողմից այցելելու անհնարինությամբ վերջիններիս մտքի, խղճի և կրոնի ազատության հիմնական իրավունքի շարունակական խախտման հարցերը:

1. Կրոնի դերը մարդու՝ իբրև անձ (սուբյեկտ) ձևավորման հարցում

Մարդու՝ իբրև բանական էակի ձևավորման գործընթացը պատմական սկզբնական շրջանից զուգորդվում է մարդու հոգևոր պահանջմունքներով. այս պահանջմունքների բավարարման կարևորագույն ուղիներից մեկը դարեր շարունակ եղել է կրոնը, որը, իբրև ուղեկից, «ուղեկցել է» անհատին և մարդկային հասարակությանը բանական մարդու ձևավորման պատմության ողջ ընթացքում:

Մարդու՝ իբրև անհատականության, իբրև անձի հիմնական հայեցակարգը, որը և զարգացրել է ժամանակների ականավոր տեսաբան Ռ. Ալեքսին, արտահայտվում է այսպես կոչված «անձի երկակի եռյակի» կառուցվածքային մոդելում: Ըստ այդմ, առաջարկվում է մարդու՝ իբրև անհատականության, անձի այնպիսի սահմանում, որը ներառում է երկու հարթությունում երեքական հատկանիշներ, որոնց բավարարում է անհատականությունը (անձը):

Առաջին հարթությունում են բանականության, զգացմունքի և (ինքնա)գիտակցության հատկանիշները, իսկ երկրորդում՝ ճանաչողական, կամային և նորմատիվ ռեֆլեքսիվության հատկանիշները[1]**:**

Միայն բանականությունը,- գրում է Ռ. Ալեքսին,- բավարար չէ, քանի որ համակարգիչներն, ինչ-որ իմաստով, ունեն բանականություն, բայց նրանք, առնվազն զարգացման ներկա փուլում, անհատականություններ (անձեր) չեն: Բանականության և զգացմունքի կապը նույնպես բավարար չէ: Կենդանիները կարող են ունենալ, առնվազն որոշակի աստիճանով ինտելեկտ և զգացմունք, բայց նրանք անհատականություններ (անձեր) չեն: Այդ պատճառով առաջին եռյակի երրորդ պայմանը՝ գիտակցությունը կամ, ավելի ճիշտ, **ինքնագիտակցությունը, առանցքային պայման է**[2]**:**

Ինքնագիտակցությունը սահմանվում է ռեֆլեքսիվությամբ, որն իր հերթին ունենում է **երեք տեսակ:**

[1] Տե՛ս **R. Alexy,** "Human Dignity and Proportionality Analysis". EJJL, v. 16, n. 3, 2015 թ., էջ 89:
[2] Տե՛ս նույն տեղում:

Ըստ այդմ՝ անհատականության (անձի) այս հիմնական հայեցակարգի համաձայն, ինքնություն, անձ դիտարկվելու համար անհրաժեշտ է, որ բավարարվեն նաև **երկրորդ «եռյակի» չափանիշները**:

Ուստիև պետք է անձն ունենա ճանաչողական (կոգնիտիվ) ռեֆլեքսիվություն, որը կայանում է էակի **«ինքնաճանաչողության» ռեֆլեքսիվությունում**՝ ինքն իրեն գիտելիքի առարկա դարձնելու հնարավորության մեջ:

Այս առումով Ռ. Ալեքսին շարունակում է գրել. «Ինքնաճանաչման ամենատարրական մասը այն փաստի իմացությունն է, որ մենք ծնվել ենք, և որ մենք կմեռնենք: Անհատականություն լինելու համար, սակայն, ճանաչողական ռեֆլեքսիվությունը անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է: Դրան անհրաժեշտ է ավելացնել նաև կամային և նորմատիվային ռեֆլեքսիվությունները»[1]:

Ռեֆլեքսիվության երկրորդ տեսակը՝ կամային ռեֆլեքսիվությունը, կայանում է սեփական վարքագիծը և դրանով իսկ ինքն իրեն կամային արարքներով ուղղորդելու կարողության մեջ: Ռ. Ալեքսին այս առումով նշում է. «Ինչ վերաբերում է առանձին գործողություններին՝ սա ինքնաուղղորդում է (ինքնավարություն - self-direction): Իսկ ողջ կյանքի համատեքստում կարելի է խոսել «ինքնակազմավորման» (ինքնաձևավորման - self-formation) մասին»:

Նորմատիվ ռեֆլեքսիվությունն առնչվում է «ճշմարտության լույսի ներքո ինքնագնահատմանը», որի վերաբերությամբ Ռ. Ալեքսին գրում է. «Այստեղ հարցը վերաբերում է նրան, թե արդյոք այն գործողությունը, որը մարդը կատարել է կամ ցանկանում է կատարել, **ճիշտ է, թե սխալ**, և արդյոք այն **կյանքը**, որը նա ապրում է կամ ապրել է, **լավ կյանք է կամ եղել է այդպիսին**»[2] (ընդգծումներն իմն են՝ հեղ.):

Այդ երկրորդ եռյակի վերջին բաղադրիչը՝ նորմատիվ ինքնագնահատումը, հանդես է գալիս իբրև մարդկային սուբյեկտայնության՝ անձնավորության (ինքնության) բարձրագույն արտահայտություն, երբ մարդը գնահատում է իր գործողությունները՝ որպես լավ կամ վատ, ճիշտ կամ սխալ:

Հենց անձ-ինքնության հայեցակարգի երկրորդ եռյակի բարձրագույն այս մակարդակում է, որ կրոնը հանդես է գալիս իբրև անձի ինքնության ձևավորման գործոն: Հավատքի միջոցով մարդը ձևավորում է սեփական բարոյական ընկալումները, նպատակները, ինքնաճանաչողության խոր շերտերը, չարի և բարու, ճիշտ և սխալ գործելու վերաբերյալ սեփական մոտեցումները:

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Տե՛ս **Alexy R.** նշվ. աշխ., էջ 90:

Հենց այս համատեքստում է, որ կրոնը դիտարկվում է ոչ միայն որպես սոցիալական ինստիտուտ (երևույթ), այլ՝ որպես էակի՝ **անձ**-ինքնության ձևավորման վրա ազդող առանցքային տարր, որով **մարդ ձևավորում է իր անձնային ինքնության նորմատիվ ռեֆլեքսիվությունը**:

«Կրոնը բավարարում է անհատի հիմնական հոգեբանական կարիքները: Շատ մարդկանց համար այն նպաստում է գոյաբանական (էքզիստենցիալ) անորոշության նվազեցմանը, նշանակություն է հաղորդում իրադարձություններին (երևույթներին), ինչպես նաև անձնական և հավաքական (սոցիալական) նպատակներին և ինքնությանը: Այն ազդում է մարդկանց հոգեկան և սոցիալական կյանքի վրա(...)»[1],- գրում են սահմանադրագետներ Ա. Սայոն և Ռ. Ուիթսը:

Այսպիսով կրոնական դավանանքի միջոցով մարդը հնարավորություն է ունենում ոչ միայն գտնել կյանքի իմաստ, այլև «ինքն իրեն ուղղորդել», «ինքն իրեն ձևավորել», «ինքն իրեն գնահատել՝ հստակ չափանիշներով» այդպիսով իսկ **«(ինքն)անձնավորվել» (սուբյեկտայնացվել)**:

Հենց այս տեսանկյունից է, որ խղճի և կրոնի ազատությունը պետք է դիտարկել որպես մարդու՝ իբրև անձի **ինքնության, ինքնագիտակցության և մարդկային արժանապատվության էական բաղադրատարր, ինչպես նաև մարդու՝ իբրև անձի սուբյեկտայնության պահպանման ու արժանապատվության բաղադրիչ**[2]:

---

[1] Տե՛ս **Sajó A., Uitz R.** "Freedom of Religion", in The Oxford Handbook of Comparative Constitutional Law, edited by Michel Rosenfeld and András Sajó. Oxford: Oxford University Press, 2012, էջ 912:

[2] Մարդկային արժանապատվության և անձի սուբյեկտայնացման կապի հարաբերակցության վերաբերությամբ անհրաժեշտ է շեշտադրել, որ մարդու արժանապատվությունը պահանջում է առաջին հերթին այն, որ պետությունը բոլոր մարդկանց լուրջ վերաբերվի՝ իբրև անձերի (մանրամասն տե՛ս, օրինակ, **Alexy R.** "Human Dignity and Proportionality Analysis," EJJL, v. 16, n. 3, 2015 թ., էջ 90): Իսկ մարդկանց լուրջ վերաբերվել՝ իբրև անձեր ընդունվելուց բխում է, որ պետք է բացառվի (1) մարդու՝ իբրև *սուբյեկտ* հանդես գալու *որակական հնարավորության բացառումը և (2) մարդու բացարձակ (կատարյալ) օբյեկտի վերածումը (*տե՛ս **Alexy R.** նշվ. աշխ. էջ 93: Տե՛ս նաև՝ Չեխիայի Սահմանադրական դատարանի 2009/08/18 - I. ÚS 557/09, վճռի 18-19-րդ կետերը, հասանելի ըստ՝ https://www.usoud.cz/fileadmin/user_upload/ustavni_soud_www/Decisions/pdf/1-557-09.pdf (վերջին մուտքը՝ 18.06.2025 թ.):

Այս առնչությամբ, օրինակ, տեղին է մեջբերել սահմանադրագետ Ա. Մանասյանի հետևյալ դատողությունը. «...սահմանադրական կարգավորումները հանգեցրին մարդու, նրա արժանապատվության, հիմնական իրավունքների և ազատությունների առնչությամբ սկզբունքորեն նոր ընկալման, որի շրջանակներում մարդը որևէ պարագայում չի կարող դիտարկվել որպես միջոց, գործիք պետական իշխանության ձեռքում, այլ հանդես է գալիս որպես իր անկրկնելի բնության մեջ ինքնանպատակ, ինքնարժեքություն», տե՛ս Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում (գիտագործնական հետազոտություն)/ Գ.Բ. Դանիելյան, Վ.Ն. Այվազյան,

Այս ելակետից է բխում նաև այն , որ մտքի, խղճի և կրոնի ազատությունը ճանաչվում է իբրև հիմնարար իրավունք, որը երաշխավորված է ինչպես տարբեր երկրների (այդ թվում՝ ՀՀ) ազգային սահմանադրություններով, այնպես էլ միջազգային փաստաթղթերով:

2. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդված (ընդհանուր նկատառումներ)

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ ՄԻԵԿ) 9-րդ հոդվածի առաջին մասում սահմանվում է.

«Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք. այս իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը և դրանք ինչպես միանձնյա, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով, քարոզչության, արարողությունների, պաշտամունքի և ծեսերի միջոցով արտահայտելու ազատություն»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ ՄԻԵԴ) ՄԻԵԿ 9-րդ հոդվածում ամրագրված մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի առնչությամբ ևս շեշտադրել է վերը ասվածին համահունչ դիրքորոշումներ՝ ընդգծելով, որ մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքն իր կրոնական հարթությամբ այն կարևորագույն տարրերից մեկն է, **որոնք ձևավորում են հավատացյալների ինքնությունը և նրանց կյանքի ընկալումը**, սակայն այն նաև մեծագույն արժեք է աթեիստների, ագնոստիկների, թերահավատների և անհավատ մարդկանց համար: Ժողովրդավարական հասարակության անքակտելի մաս կազմող բազմակարծությունը, որը դարեր շարունակ սերմանվել է, կախված է դրանից:

Ա.Ա. Մանասյան: Ընդհ. խմբ. Գ. Դանիելյանի, Եր., Հայրապետ հրատ., 2015, էջ 112: Այլ՝ համաչափության սկզբունքի համատեքստում, օրինակ, Ք. Ալեքսանյանը հարցի առնչությամբ նշել է. «...մարդկային արժանապատվությունը գործում է որպես «սահմանափակումների անհաղթահարելի սահմանափակում», որը համաչափության սկզբունքի համարժեքության գնահատման փուլում բացառում է մարդու հիմնական իրավունքների և ազատությունների այնպիսի սահմանափակումները, **որոնց դեպքում մարդը պետության կողմից օգտագործվում է որպես միջոց, գործիք**» (ընդգծումը՝ հեղ.), տե՛ս Ալեքսանյան Ք., Արժանապատվության և համաչափության սկզբունքի հարաբերակցությունը: Պետություն և իրավունք, 92 No. 1 (2022), էջ 45:

Այդ ազատությունն առաջացնում է, *inter alia,* կրոնական համոզմունքներ ունենալու կամ չունենալու և կրոն դավանելու կամ չդավանելու ազատություն[1]:

3. Խղճի և կրոնի ազատության ներքին (forum internum) և արտաքին (forum externum) դրսևորումները ՄԻԵԿ 9-րդ հոդվածի համատեքստում

ՄԻԵԿ 9-րդ հոդվածով սահմանված խղճի և կրոնի ազատությունն առաջին հերթին ենթադրում է, որ անձն ունենա *իր մտքում (ուղեղում) (իր ներսում) որոշակի կրոնի հարելու, կրոնական մոտեցումները կիսելու, իր մեջ, իր ներսում մարդու և աշխարհի գոյաբանական (էքզիստենցիալ) հարցերի առնչությամբ սեփական պատկերացումները ձևավորելու, ըստ այդմ՝ սեփական աշխարհայացքը ըստ իր կրոնական համոզմունքներին համապատասխան կազմավորելու իրավունք: Խղճի և կրոնի ազատության այս ասպեկտը, ելնելով այն հանգամանքից, որ իրականցվում է անձի ներսում (մտքում, ուղեղում) կարող է պայմանականորեն*[2] *դիտարկվել իբրև այս ազատության ներքին ասպեկտ (forum internum):*

Սակայն, որպեսզի անձը կարողանա իրացնել ՄԻԵԿ 9-րդ հոդվածում ամրագրված մտքի, խղճի և կրոնի ազատությունը, միայն այդ ներքին ասպեկտն այդ ազատության իրացման համար **«բավարար չէ»:**

Անհրաժեշտ է, որ անձն ունենա նաև իր համոզմունքներն ու կրոնական հայացքներն ազատորեն **արտահայտելու ազատություն,** որն էլ հանդիսանում է ՄԻԵԿ 9-րդ հոդվածում ամրագրված մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի արդեն **արտաքին ասպեկտը (forum externum):**

Կրոնական տարատեսակ արարողություններին, ծեսերին մասնակցությունը, կրոնական տարատեսակ պաշտամունքները կրոններում ունենում են կենտրոնական և կարևորագույն նշանակություն ունեցող դեր[3]: Այս առնչությամբ է, որ անձի՝ իր դավանած կրոնական հայացքներն արտահայտելու ազատությունը ստանում է առանցքային կարևոր դեր, ուստիև պաշտպանվում

[1] Տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Ս.Ա.Ս.-ն ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ][*S.A.S. v. France* [GC]], թիվ 43835/11, § 124, ՄԻԵԴ 2014 և *Իզեթին Դողանը և այլք ընդդեմ Թուրքիայի* [ՄՊ] [*İzzettin Doğan and Others v. Turkey* [GC]], թիվ 62649/10, § 103, ՄԻԵԴ 2016):

[2] Թեև կարող են գրականության մեջ տրվել որոշակի ոչ պայմանական սահմանումներ, սակայն, գործնականում այս ազատության թե՛ ներքին և թե՛ արտաքին ասպեկտների սահմանը շատ հաճախ կա՛մ դժվար է լինում, կա՛մ, ըստ էության, անհնար է լինում զանազանել, այդ իսկ պատճառով բաժանումն իրականցվում է պայմանականորեն:

[3] Այս առնչությամբ Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարանն իր որոշումներից մեկում նշել է, որ. «...«կրոնական ծեսերի կատարումը» կենտրոնական նշանակություն ունի յուրաքանչյուր հավատքի և յուրաքանչյուր համոզմունքի համար, ապա այս հասկացությունը՝ իր պատմական բովանդակության համատեքստում, **պահանջում է ընդլայնված մեկնաբանություն**» (ընդգծումը՝ հեղ.), մանրամասն տե՛ս Избранные решения Федерального Конституционного Суда Германии / Под ред. Ю. Швабе. - Москва: Инфотропик Медиа, 2018, էջ 238:

թե՛ ազգային, թե՛ միջազգային տարատեսակ փաստաթղթերով: Այսպես՝ անձի կողմից իր կրոնի **դավանանքի ազատության արտահայտությունը** կարող է իրացվել ՄԻԵԿ 9-րդ հոդվածում ամրագրված ձևերով՝ «**քարոզչության, արարողությունների, պաշտամունքի և ծեսերի միջոցով արտահայտելու**» ազատությամբ:

ՄԻԵԴ-ը, Ս.Ա.Ս.-ն ընդդեմ Ֆրանսիայի գործով կայացրած վճռում անդրադառնալով դավանանքի ներքին և արտաքին ասպեկտների վերը նշված հարցերին, շեշտել է, որ. «Թեև կրոնական ազատությունն առաջին հերթին անձնական խղճի հարց է, սակայն այն նաև ենթադրում է սեփական կրոնը ինչպես միանձնյա՝ մասնավոր կերպով, այնպես էլ այլոց հետ համատեղ՝ հրապարակավ և այն անձանց շրջանում, ով հավատը կիսում է, **դավանելու ազատություն**: 9-րդ հոդվածը թվարկում է **տարբեր ձևեր, որոնցով կրոնի կամ համոզմունքների դավանումը կարող է դրսևորվել, այն է՝ քարոզչության, արարողությունների, պաշտամունքի և ծեսերի միջոցով**» (ընդգծումներն իմն են՝ հեղ.)[1]:

4. Կրոնի (և/կամ համոզմունքի) արտահայտության առանցքային մաս հանդիսացող արարք versus կրոնով կամ համոզմունքով ներշնչմամբ, այդ շարժառիթներով կատարված արարք

Ինչպես նշվեց, մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունքը ենթադրում է իր կրոնական համոզմունքները դավանելու, դրանք արտահայտելու ազատություն՝ որոշակի արարքների կատարման ձևով:

Սակայն, մյուս կողմից, սա ենթադրում է նաև որոշակի անհրաժեշտ հավասարակշռություն. ժողովրդավար հասարակությունում մտքի, խղճի, կրոնի ազատության հատկապես արտաքին կողմը՝ դավանանքի արտահայտման անձանց ազատությունը, ողջամտորեն կարող է որոշակի իրավաչափ սահմանափակման ենթարկվել և բացարձակ չէ :

ՄԻԵԴ-ը այս առնչությամբ բազմիցս է շեշտադրել է, որ ժողովրդավարական այն հասարակություններում, որտեղ մի շարք կրոններ գոյակցում են միևնույն բնակչության շրջանում, *կարող է անհրաժեշտ լինել սահմանափակել կրոնը կամ համոզմունքները դավանելու սեփական ազատությունը, որպեսզի հաշտեցվեն տարբեր խմբերի շահերը և ապահովվեն, որ յուրաքանչյուր անձի համոզմունքները լինեն հարգված*[2]:

[1] Տե՛ս *Ս.Ա.Ս.-ն ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ][*S.A.S. v. France* [GC]], թիվ 43835/11, §125, ՄԻԵԴ 2014:

[2] Տե՛ս, օրինակ, *Կոկկինակիսն ընդդեմ Հունաստանի*, 25 մայիս 1993 թ., § 33:

Այս առումով խիստ **կարևոր է** (1) կրոնի կամ համոզմունքի արտահայտման համար **առանցքային, էական նշանակություն** ունեցող ակտերը (արարքները) տարբերակել (2) այն ակտերից (արարքներից), որոնք կրոնով կամ համոզմունքով սոսկ **ներշնչված** են եղել կամ կատարվել են՝ **սոսկ խրախուսված** լինելով կրոնից և/կամ համոզմունքից ակտերից (արարքներից):

Ս.Ա.Ս. ընդդեմ Ֆրանսիայի գործով ՄԻԵԴ-ը նկատել է, որ արարքը, որը **ոգեշնչված է, մղված կամ ազդված է** որևէ կրոնից կամ համոզմունքից, 9-րդ հոդվածի իմաստով որպես **«արտահայտություն» դիտարկվելու** համար **պետք է սերտորեն կապ ունենա տվյալ կրոնի կամ համոզմունքի հետ:** Ըստ ՄԻԵԴ-ի՝ այդպիսի օրինակ կարող է ծառայել երկրպագության կամ նվիրվածության այն ակտը (արարքը), որը տվյալ կրոնի **պրակտիկայի ընդունված ձև է**: Սակայն կրոնի կամ համոզմունքի «դրսևորումը» չի սահմանափակվում միայն նման գործողություններով. տվյալ գործողության և հիմքում ընկած համոզմունքի միջև բավարար սերտ և անմիջական կապի առկայությունը **պետք է գնահատվի յուրաքանչյուր գործով առանձին՝ փաստերի հիման վրա**[1]:

Այս առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ունի կայացած նախադեպային պրակտիկա, ըստ որի՝ ՄԻԵԿ 9-րդ հոդվածը չի պաշտպանում ցանկացած գործողություն, **որի դրդապատճառը կամ ոգեշնչման աղբյուրն է եղել կրոնը կամ համոզմունքը և միշտ չէ, որ երաշխավորում է այնպիսի մի իրավունք, համաձայն որի անձը հնարավորություն ունենա հանրային տիրույթում իրեն այն կերպ դրսևորել, որը պայմանավորված լինի իր կրոնով կամ համոզմունքներով**[2]:

Եվ հակառակը, այն դեպքերում, երբ կոնկրետ ակտի (արարքի) և կրոնական դավանանքի միջև ուղղակի կապ կա **և** այդ ակտը (արարքը) **բխում է** դավանած կրոնից (կամ համոզմունքներից)՝ լինելով տվյալ կրոնի (համոզմունքի) առանցքային տարրը, ապա այդ դեպքերում արդեն **կարող է խոսք գնալ մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի իրացման և/կամ դրա սահմանափակման կամ խախտման մասին:**

Այս առումով էլ, սակայն, հասկանալու համար՝ իրավունքի խախտում առկա է, թե ոչ, պետք է ելնել գործի կոնկրետ հանգամանքներից (in concreto):

[1] Մանրամասն տե՛ս *Ս.Ա.Ս.-ն ընդդեմ Ֆրանսիայի* վճիռը, § 55:

[2] Տե՛ս, օրինակ, ՄԻԵԴ՝ *Լեյլա Շահինը ընդդեմ Թուրքիայի* [Մ.Պ.], թիվ 44774/98, 10 նոյեմբերի 2005 թ. վճիռը, §§ 105, 121:

5. Ջոզեֆիդեսն ընդդեմ Թուրքիայի versus Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի վճիռները (կրոնական վայր մուտքի արգելք՝ առանց փաստացի կապի, versus խղճի և կրոնի ազատության իրավունքի սահմանափակում՝ բնակության վայրում):

Ջոզեֆիդեսն ընդդեմ Թուրքիայի գործով Դիմումատուն՝ Ջոզեֆիդեսը, ՄԻԵԴ բողոք էր ներկայացրել, ի թիվս այլնի նաև նշելով, որ թուրքական իշխանությունների կողմից իրեն Կիպրոսի հյուսիսային օկուպացված մաս մուտք գործելու արգելումը խախտում է ՄԻԵԿ 9-րդ հոդվածով երաշխավորված «կրոնի ազատության իրավունքը», քանի որ դրա բերումով խոչընդոտվում է իր՝ «**կրոնական պրակտիկայի ավանդական վայրեր՝** եկեղեցիներ, վանքեր այցելելու իրավունքը»:

ՄԻԵԴ-ը, սակայն, կասկածի տակ չդնելով այն հանգամանքը, որ վանքեր, եկեղեցիներ այցելությունը ընդգրկվում է կրոնի ազատության դրսևորման ընդունելի ձևերի մեջ, այնուամենայնիվ, ելնելով այս գործի *այն մասնավոր հանգամանքներից*, որ դիմողը **մշտապես ապրել է** կղզու հարավային հատվածում և որ հյուսիսային մասում ունի միայն մշակովի հողատարածքներ, **որոնք նա ժառանգել է իր ծնողներից**, ինչպես նաև այն, որ 1974 թվականի ռազմական գործողությունների հետևանքով ցանկացած հույն-կիպրացու համար է այդ տարածք մուտքն անհնար եղել, եզրակացրել է, որ թուրքական բանակի կողմից **դիմողին բաժանարար գիծը հատելու արգելքը չի խոչընդոտում նրան իրականացնելու 9-րդ հոդվածով երաշխավորված իրավունքները *կղզու հարավային մասում, որտեղ նա միշտ ապրել է***:

Ըստ այդմ՝ ՄԻԵԴ-ը որևէ միջամտություն չի հայտնաբերել դիմողի կրոնի ազատության իրավունքին՝ դիմումն այդ մասով համարելով ակնհայտ անհիմն[1]:

Մեկ այլ դեպքում սակայն՝ եկեղեցիներ, վանքեր այցելելու իրավունքի սահմանափակման հետ կապված այլ հարցով, ելնելով գործի հանգամանքների առանձնահատկություններից, ՄԻԵԴ-ը կայացրել է տրամագծորեն այլ որոշում:

Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի գործով[2] Դիմող կառավարությունը պնդել է, որ Կիպրոսի հյուսիսում՝ օկուպացված Կարպասի շրջանում բնակվող հույն-կիպրացիների ապրելու պայմանները և դրանց հետ կապված սահմանափա-

[1] Տե՛ս *Ջոզեֆիդեսն ընդդեմ Թուրքիայի*, գանգատ թիվ 21887/93, (ՄԻԵԴ որոշում ընդունելիության վերաբերյալ), 24.08.1999 թ:

[2] Տե՛ս *Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի*, գանգատ թիվ 25781/94, ՄԻԵԴ Մեծ պալատի վճիռ, 2001 թ. մայիսի 10, ԵԴՄԻ 2001-IV:

կումները խախտում են վերջիններիս կրոնի ազատության իրավունքը, ի մասնավորի այն, որ վերջիններիս վրա դրված **տեղաշարժի ազատության սահմանափակումները** խոչընդոտել են հույն-կիպրացիների մուտքը դեպի իրենց կրոնական պաշտամունքի վայրեր (այդ թվում՝ Ապոստոլոս Անդրեաս վանք)[1]:

Ըստ Դիմող կառավարության՝ նշյալ սահմանափակումները խոչընդոտել են հունական ուղղափառ կրոնական արարողությունների բնականոն և կանոնավոր կազմակերպմանը, ըստ այդմ՝ նաև խախտել օկուպացված Կարպասի շրջանում բնակվող հույն-կիպրացիների կրոնի ազատության իրավունքը:

Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը նշել է, որ այդ սահմանափակումները (Ապոստոլոս Անդրեաս վանք մուտքի սահմանափակումը, գյուղերից դուրս կրոնական արարողությունների մասնակցության և լրացուցիչ քահանաների նշանակման մերժումը) հանդիսացել է ՄԻԵԿ 9-րդ հոդվածի խախտում: Հանձնաժողովը նաև նշել է, որ բողոքարկվող միջոցառումների վերաբերյալ արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներ գոյություն չեն ունեցել:

ՄԻԵԴ-ն ընդունել է հանձնաժողովի կողմից հաստատված փաստերը, նշելով, որ հույն-կիպրացի բնակչության՝ **տվյալ ժամանակահատվածում նրանց տեղաշարժի ազատության վրա դրված սահմանափակումները զգալիորեն սահմանափակել են նրանց կրոնական համոզմունքները պահպանելու կարողությունը, մասնավորապես՝ դեպի իրենց գյուղերից դուրս գտնվող երկրպագության վայրեր մուտք գործելու և կրոնական կյանքի այլ ասպեկտներին մասնակցելու հնարավորությունը**: Արդյունքում ՄԻԵԴ-ը արձանագրել է ՄԻԵԿ 9-րդ հոդվածի խախտում:

Ինչպես ակնհայտ է, այս գործը տարբերվում է նախորդից՝ **Ջոզեֆիդեսն ընդդեմ Թուրքիայի գործից, մի քանի առանցքային առանձնահատկություններով, որոնք անհրաժեշտաբար պարտադիր է հաշվի առնել, համանման դեպքերում ՄԻԵԿ 9-րդ հոդվածով նախատեսված իրավունքի խախտման մասին խոսելիս:**

Մասնավորապես՝ «Ջոզեֆիդեսն ընդդեմ Թուրքիայի» գործով դիմողը բողոքել է, որ իրեն արգելվել է մուտք գործել Կիպրոսի հյուսիսային՝ օկուպացված մաս՝ այցելելու իր կրոնական պաշտամունքի ավանդական վայրեր (եկեղեցիներ, վանքեր)՝ լինելով **կղզու հարավային մասի մշտական**

[1] Ի լրումն, սույն գործով առանձնահատկություն է եղել նաև այն, որ Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության (այսուհետ նաև՝ ՀԿԹՀ) իշխանությունները հավանություն չեն տվել լրացուցիչ քահանաների նշանակմանը տարածաշրջանում, ինչի հետևանքով ողջ Կարպասի համար եղել է ընդամենը մեկ քահանա:

բնակիչ, ում իր դիմումում ներկայացված պաշտամունքի վայրերի հետ փաստացի[1] **«կապը» արտահայտվում էր «ծնողներից ժառանգած մշակովի հողատարածքներ» ունենալով:**

Երկրորդ գործով, փաստերի դասավորվածությունը բոլորովին այլ էր. այստեղ արդեն «Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի» գործում 9-րդ հոդվածի խախտումը վերաբերում էր **Կիպրոսի հյուսիսային՝ օկուպացված Կարպասի շրջանում փաստացիորեն «արգելափակված» վիճակում ապրող հույն-կիպրացի բնակչությանը, ովքեր բնակվել ու բնակվում էին այդ վայրերում և ունեին «օբյեկտիվ» կապ կրոնական այդ սրբավայրերի հետ:**

6. Հայկական համատեքստը՝ ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց ներկայիս իրադրության լույսի ներքո

a. Ընդհանուր դրույթներ

2020 թ. 44-օրյա պատերազմի, ինչպես նաև 2023 թ. Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի նկատմամբ իրականացված ռազմական գործողությունների հետևանքով ԼՂ հարյուր հազարից ավել բնակչությունը, որի գերակշիռ, մեծագույն հատվածը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հետևորդներ են, բռնի տեղահանության բերումով զրկված է իր մերձավորների գերեզմաններ այցելելու, այնտեղ կրոնական-ծիսական կարգերով պայմանավորված արարողություններ իրականացնելու հնարավորությունից:

Այս առնչությամբ կարևոր է ընդգծել, որ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին դիտարկում է հանգուցյալների **գերեզմաններ այցելությունը, խնկարկումը** որպես կարևոր և առանձնահատուկ ծիսական արարողակարգ՝ նվիրված հանգուցյալների հիշատակին:

Ողջ տարվա ընթացքում այդ ծիսական արարողակարգերը **պարտադիր են** Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու տոնացույցում ընդգրկված հինգ Տաղավար (կարևորագույն) տոներին հաջորդող օրերին: Ավելին, հայկական եկեղեցու հետևորդների շրջանում ընդունված է նաև հարազատների շիրիմներին այցելել նրանց ծննդյան և մահվան օրերին, նաև քահանաների կամ հոգևոր սպասավորների հետ՝ հոգեհանգստի կարգ կատարելու համար:

b. Գերեզմաններում կրոնական-ծիսական կարգերի անցկացումը՝ որպես Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու կրոնական ուսմունքի առանցքային բաղադրիչ

[1] Խոսքը, բնականաբար, ոչ թե «հոգևոր և աներևութական» սուբյեկտիվ կապի մասին է, այլ՝ փաստացի այդ վայրերի վանքերի, եկեղեցիների և դիմումատուի փաստացի օբյեկտիվ կապի:

Գերեզմաններում կրոնական-ծիսական կարգերի իրականացումը հայկական կրոնի՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու կրոնական-ծիսական արարողակարգերի **առանցքային, կարևոր «ավանդական պրակտիկայի մաս է»:**

Հայկական աստվածաբանական գրականության մեջ այս առնչությամբ նշվում է, որ.

«Ըստ քրիստոնեական փրկաբանական ըմբռնման՝ գերեզմանը մահացածի մշտական և անփոփոխ **հանգրվանը չէ,** այլ՝ **նախնական հանգստարանը:** Գերեզմանի հանգիստը մինչև հարություն ժամանակավոր քուն է, իսկ մահացողը՝ **ննջեցյալ և ոչ թե մեռյալ**: Դրա հետ է կապված փրկաբանական այն գաղափարը, որ գերեզմանն ինչ-որ ժամանակ **հարության վայր է դառնում (...) Գերեզմանօրհնեքի նպատակն է հիշել հանգուցյալներին և ավետել նրանց հարության հույսը»:**

(...)

Հայ եկեղեցում հանգուցյալների հիշատակումը կատարվում է հոգեհանգստի միջոցով, ինչպես նաև Տաղավար տոներին հաջորդող գերեզմանօրհնեքի ժամանակ: (...) Քրիստոնեական եկեղեցին ուսուցանում է կենդանի և ննջեցյալ մարդկանց միասնությունը, քրիստոնեական կյանքի սկիզբն ու վերջը շաղկապվում են միմյանց: Հայ եկեղեցու վարդապետության համաձայն, մեռելները **մահից հետո սպասում են Վերջին դատաստանի օրվան**: Հոգեհանգստյան արարողությունն էլ այս իմաստով է կատարվում:

Այն երախտագիտության **արտահայտություն է, ինչպես նաև աղոթք՝ ննջեցյալների համար: Ողջերը, հիշելով նրանց, հոգեհանգստի ընթացքում ողորմություն են հայցում Աստծուց՝ ննջեցյալների հոգիների համար»**[1] (ընդգծումներն իմն են՝ հեղ.):

Ինչպես ակնհայտ է դառնում մեջբերված հատվածից Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հետևորդների համար իրենց հարազատների գերեզմաններ այցելություններն ունեն **կրոնական-ծիսական** արարողակարգերում կարևորագույն նշանակություն, այդպիսի կրոնական արարողությունները հանդես են գալիս իբրև հայկական կրոնի արարողակարգերի առանցքային և կարևորագույն մաս (հատկանիշ), ըստ այդմ՝ հանդիսանում են Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հետևորդների **հոգևոր կյանքի դրսևորման անբաժան մաս**:

[1] Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան: «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանի գիտխմբագրական խորհուրդ՝ Հ.Մ. Այվազյան (գլխ. խմբ. տնօրեն) և ուրիշներ: Եր., Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 2002 թ., էջ 595:

c. Բռնի տեղահանությունը և վերադարձի անհնարինությունը՝ որպես գերեզման այցելելու իրավունքի համակարգային խոչընդոտ

Վերը ասվածի համատեքստում կարևոր է ընդծգել, որ ԼՂ-ում բնակվող խաղաղ բնակչությունը ենթարկվել է բռնի տեղահանման, այսինք՝ ԼՂ-ում բնակվող հայերը ոչ թե կամավոր կերպով են լքել իրենց ծննդավայրը, և որպես հետևանք՝ կամավոր կերպով հրաժարվել իրենց մերձավոր ազգականների գերեզմաններ այցելելուց, այլ նրանք լքել են ԼՂ-ն իրենց կյանքին վտանգի իրական սպառնալիքի առկայության պայմաններում, ուստիև զրկվել են ԼՂ-ում գտնվող գերեզմաններ այցելելու իրավունքից՝ իրենց կամքից անկախ՝ հարկադրանքի պայմաններում:

Բացի այդ, ԼՂ խաղաղ բնակչությանը բռնի տեղահանության ենթարկած Ադրբեջանի Հանրապետությունը անգամ 2020 թ. պատերազմից և 2023 թ. ռազմական գործողություններից հետո՝ տևական ժամանակ որևէ կերպ չի ապահովում ԼՂ բնիկ ազգաբնակչության՝ էթնիկ հայերի վերադարձի հնարավորությունը իրենց բնակավայրեր, ավելին՝ այդպիսին ապահովելու դեպքում անգամ չկա որևէ երաշխիք վերջիններիս **ապահով վերադարձի:** Արդյունքում՝ ԼՂ էթնիկ հայերը, որոնք Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հետևորդ են, ենթարկված լինելով բռնի տեղահանության և միաժամանակ չունենալով վերադարձի իրական և անվտանգ հնարավորություն, իրենց կամքից անկախ, այդ թվում նաև՝ ՀՀ-ի հետ փակ սահմանների բերումով տևական ժամանակ է զրկված են ԼՂ-ում գտնվող իրենց մերձավորների գերեզմաններ այցելելու որևէ հնարավորությունից:

7. Եզրահանգումներ

Ողջ վերոգրյալը հիմք է տալիս պնդելու, որ հիմք ընդունելով ՄԻԵԴ մեջբերված նախադեպային իրավունքը, և հաշվի առնելով այս առումով առանցքային այն հանգամանքները, որ

1) ԼՂ-ից բռնի տեղահանության է ենթարկվել *բնիկ հայ բնակչությունը, որը սերնդեսերունդ և հարյուրամյակներով է ապրել այնտեղ.*

2) բռնի տեղահանության ենթարկած անձինք մինչ 2020 թ. պատերազմն ու 2023 թ. ռազմական գործողություններն *իրենց ամբողջ կյանքի ընթացքում ունեցել են հասանելիություն իրեն մերձավորների գերեզմաններին.*

3) եթե անգամ ԼՂ-ից բռնի տեղահանված անձի կրոնի ազատության իրավունքի՝ կրոնական պաշտամունքի վայրեր այցելելու դրսևորման ձևը, կարող է արտահայտվել նաև ՀՀ-ում գտնվող եկեղեցիներ և վանքեր այցելելով, ապա արդեն նույնը չի կարող ասվել *կրոնի ազատության*

իրավունքից բխող՝ գերեզմաններ այցելելու իրավունքի մասին. ԼՂ-ում բնակված անձինք չունեն ֆիզիկապես որևէ հասանելիություն գերեզմաններին, ընդ որում՝ այդ հասանելիության բացակայությունն իր հերթին անորոշ ժամկետով է.

4) ԱՀ գործողությունների հետևանքով և նրա պատասխանատվությամբ ԼՂ բնակչությանը, ի թիվս այլնի, նաև գերեզման այցելելու իրավունքից զրկումը *չունի (և չի կարող հետապնդել) որևէ իրավաչափ նպատակ,*

ապա՝ վերջիններս արդեն տևական ժամանակ է, ինչ զրկված են դավանած կրոնից բխող և իրենց կրոնական-ծիսական կարգի առանցքային մաս համարվող՝ Տաղավար տոներից հետո գերեզմանօրհնեքի, հոգեհանգստի կարգի, գերեզմանի խնկարկման կրոնական-ծիսական արարողակարգեր իրականացնելու հնարավորությունից՝ առանց ՄԻԵԿ 9-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որևէ իրավաչափ հիմքի:

Ուստիև պետք է պնդել, որ 2020 թ. 44-օրյա պատերազմի, ինչպես նաև 2023 թ. ռազմական ***գործողությունների հետևանքով արդեն տևական ժամանակ է*** *(շուրջ երկուսից-հինգ տարի (կախված բռնի տեղահանված բնակչի բնակության նախորդ վայրից)), ինչ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հետևորդների, որոնց «կրոնական պրակտիկայի առանցքային մաս է» գերեզմաններ այցելելը և այնտեղ կրոնական-ծիսական կարգերի իրականացումը, ԼՂ-ից բռնի տեղահանվելու և իրենց բնակավայրեր անարգել և անվտանգ վերադառնալու իրական հնարավորության բացակայության բերումով ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց՝ ՄԻԵԿ 9-րդ հոդվածով երաշխավորված՝ կրոնի ազատության իրավունքը ենթարկվում է* ***շարունակական խախտման:***

Օգտագործված գրականության ցանկ

1. **Alexy R.** (2015). Human Dignity and Proportionality Analysis, Espaço Jurídico Journal of Law – EJJL, vol. 16, no. 3.

2. **Sajó A. & Uitz R.** (2012). Freedom of Religion, in: Michel Rosenfeld & András Sajó (Eds.), The Oxford Handbook of Comparative Constitutional Law. Oxford: Oxford University Press.

3. **Դանիելյան Գ.Բ., Այվազյան Վ.Ն., Մանասյան Ա.Ա.** Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում (գիտագործնական հե-

տազոտություն: Ընդհ. խմբ.՝ Գ. Դանիելյան: Երևան, 2015, Հայրապետ հրատարակչություն:

4. **Ալեքսանյան Ք.** (2022). Արժանապատվության և համաչափության սկզբունքի հարաբերակցությունը: Պետություն և իրավունք, թիվ 92(1):

5. Европейский суд по правам человека (ЕСПЧ), *S.A.S. v. France* [GC], no. 43835/11, Judgment of 1 July 2014.

6. ՄԻԵԴ, *Izzettin Doğan and Others v. Turkey* [GC], no. 62649/10, Judgment of 26 April 2016:

7. ՄԻԵԴ, *Leyla Şahin v. Turkey* [GC], no. 44774/98, Judgment of 10 November 2005:

8. ՄԻԵԴ, *Kokkinakis v. Greece*, no. 14307/88, Judgment of 25 May 1993:

9. ՄԻԵԴ, *Cipriano Josephides v. Turkey*, no. 21887/93, Decision on Admissibility, 24 August 1999:

10. ՄԻԵԴ, *Cyprus v. Turkey* [GC], no. 25781/94, Judgment of 10 May 2001, ECHR 2001-IV:

11. Избранные решения Федерального Конституционного Суда Германии / Под ред. Ю. Швабе. - Москва: Инфотропик Медиа, 2018, էջ 238:

12. «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան: Գիտ. խմբագրական խորհուրդ՝ Հ.Մ. Այվազյան (գլխ. խմբ. տնօրեն) և ուրիշներ: Երևան: Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 2002:

ЛИШЕНИЕ НАСИЛЬСТВЕННО ПЕРЕМЕЩЁННЫХ ИЗ НАГОРНОГО КАРАБАХА ЛИЦ ПРАВА ПОСЕЩАТЬ МОГИЛЫ СВОИХ РОДСТВЕННИКОВ, НАХОДЯЩИЕСЯ В НК, КАК ПРОДОЛЖАЮЩЕЕСЯ НАРУШЕНИЕ ПРАВА НА СВОБОДУ МЫСЛИ, СОВЕСТИ И РЕЛИГИИ

Аннотация

Статья посвящена вопросу продолжающегося нарушения права на свободу мысли, совести и религии лиц, насильственно перемещённых из Нагорного Карабаха в результате блокады 2022 г. и военного нападения в сентябре 2023 г. Нарушение рассматривается в контексте невозможности для перемещённого населения посещать могилы своих родственников, находящиеся в НК, и проводить там религиозные и обрядовые церемонии. В статье подчёркивается ключевая роль религии в формировании человека как личности (субъекта), в развитии нравственных представлений и самосознания.

Анализируется юриспруденция Европейского суда по правам человека (ЕСПЧ) относительно статьи 9 Европейской конвенции о защите прав человека и основных свобод (ЕКПЧ), уделяя особое внимание внутреннему (forum internum) и внешнему (forum externum) аспектам свободы религии. Отмечается, что участие в религиозных обрядах и церемониях является ключевой формой выражения религиозных убеждений. Разграничиваются действия, являющиеся неотъемлемой частью религиозного выражения, и действия, лишь вдохновлённые религией, опираясь на прецедентную практику ЕСПЧ.

Подчёркивается, что проживавшие в НК армяне, являясь последователями Армянской Апостольской Святой Церкви, в результате насильственного перемещения лишены возможности посещать могилы своих родственников и совершать там религиозные обряды, что в свете практики ЕСПЧ квалифицируется как продолжающееся нарушение права, гарантированного статьёй 9 ЕКПЧ.

Ключевые слова: Нагорный Карабах, насильственно перемещённые лица, свобода мысли, совести и религии, статья 9 Европейской конвенции о правах человека, право посещать могилы, религиозные обряды, свобода выражения религии, forum internum, forum externum, человеческое достоинство, духовные права.

DEPRIVATION OF THE RIGHT OF PERSONS FORCIBLY DISPLACED FROM NAGORNO-KARABAKH (NK) TO VISIT THE GRAVES OF THEIR RELATIVES LOCATED IN NK AS A CONTINUING VIOLATION OF THE RIGHT TO FREEDOM OF THOUGHT, CONSCIENCE, AND RELIGION

Annotation

The article addresses the continuous violation of the right to freedom of thought, conscience, and religion of persons forcibly displaced from Nagorno-Karabakh as a result of the 2022 blockade and the September 2023 military attack.

The violation is examined in the context of the displaced population's inability to visit the graves of their relatives in Nagorno-Karabakh and perform religious and ritual ceremonies there. The article highlights the crucial role of religion in shaping the individual as a person (subject), particularly in the development of moral perceptions and self-awareness.

It analyzes the case law of the European Court of Human Rights (ECtHR) concerning Article 9 of the European Convention on Human Rights (ECHR), paying special attention to the internal (forum internum) and external (forum externum) dimensions of freedom of religion. It is emphasized that participation in religious rites and ceremonies is a central form of expressing religious beliefs. The article distinguishes between acts that constitute an essential part of religious expression and those merely inspired by religion, relying on ECtHR precedent.
It is stressed that the Armenian population of Nagorno-Karabakh, as followers of the Armenian Apostolic Church, has been deprived - due to forced displacement - of the opportunity to visit the graves of their relatives and perform religious rites there. In light of ECtHR jurisprudence, this is substantiated as a continuing violation of the right guaranteed by Article 9 of the ECHR.
Keywords: Nagorno-Karabakh, forcibly displaced persons, freedom of thought, conscience and religion, Article 9 of the European Convention on Human Rights, right to visit graves, religious rituals, freedom of manifestation of religion, forum internum, forum externum, human dignity, spiritual rights.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 08.09.2025 թ., տրվել է գրախոսության 09.09.2025 թ., ընդունվել է տպագրության 19.09.2025 թ.: